իւրոց։ Եւ 'ի թախանձելն նոցա առնել հաւասար Յունաց ըստ ծիսից և արարողութեանց, և ապա հոդալ զպահանջ նորին. նա յայտնապէս ասէր թէ չտամ աւելի քան ըզխոստացեալն իմ։ Եւ 'ի մեկնիլ նոցա անտի, կոչեցին ըզնոսա գործակալքն, եւ իբրեւ յանդիմանութիւն ասէին թէ չատացարուք առ այժմ, յետոյ ամենայն ինչ կատարի շնորհիւ Արքայի, այլ դուք ոչ կամեցայք լսել, և այսպէս վատթարացուցիք զգործն։ Տարակուսեալ էին Հայք՝ զի յողդողդ միտք եւ անհաստատ խոստմունք Դատաւորին չտային վստահութիւն մխել 'ի գործ. սակայն Յօճաքեանն առեալ տարաւ զնոսա առ Դատաւորն, և 'ի ճանապարհին յորդորէր շահել զմիտս նորա, եւ յաղագս փոքր իրաց չխանգարել զգործն։ Եւ իբրեւ յանդիման եղեն ասէ՝ Էֆէնտի, ընդէ՞ր ոչ կատարես զգործս սոցա. և նա ասէ. դոքա խաղ արարին զիս պահանջելով զաւելորդ իրս, եւ յանձն առ կատարել զառաջին խոստմունս իւր, և այրն երաշխաւոր եղեւ, յետոյ ասէր Դատաւորն թէ՝ յետ գնալոյ Սախարեային 'ի Դամասկոս, եթէ հրաման ելցէ անտի յայլ կերպ՝ չմիջամտեմ. առ այս չվոխեալ Հայոց ասեն, ուրեմն որոգայթ պատրաստես մեզ դառնալով 'ի խոստմանէդ, այլ նա ասէր՝ զայս իրրեւ զուարճութիւն խօսեցայ ընդ ձեզ, ոչ դառնամ 'ի բանից իմոց, և Յօճաքեանն քաջալերէր զնոսա չերկնչիլ, այլ փոյթ տանել 'ի կատարումն գործոյն, զի ինքեանք եւս մեկնեսցին 'ի Կոստանդինուպոլիս։ Եւ յետ մեկնելոյ նորին, սկսան կատարել զգործ սակարկութեան. ետուն նմա գրել և հաստատել կնքով իւրով կատարել զամենայն ինչ զոր խոստացաւն եւ ինքեանք ետուն նմա մուրհակ պարտուց կնքով Պատրիարքին, հատուցանել զգումարն սակարկեալ յետ կատարման գործոյն, այսպէս իբր բարեկամացեալ ընդ նմա մեկնեցան անտի։

Ի վաղիւ անդր կազմեաց Ժողով մեծ 'ի Ս. Յարութիւն, հրաւիրեալ անդ զԳործակալս եւ զԱւագանին քաղաքին. գնացին և գլխաւորք Հայոց և Յունաց. բազմեցաւ Դատաւորն ուրախ եւ զուարթ 'ի սրահ Գերեզմանին իւրովքն հանդերձ, և ասէր իբր յանդիմանութիւն Յունաց. զամենայն տեղիս ձեր չինեցիք չքեղ և պայծառ եւ զխորանն